Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2025-2026 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
11-12 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Առևտրային նավատորմի բեռնատարողությամբ առաջատար երկրներից որի՞ն բնորոշ չէ էժան (հարմար) դրոշի երևույթը**
1. Լիբերիա 2. Պանամա 3. Մարշալյան կղզիներ 4. Սինգապուր

2. **2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանք չէ՝**
1. Գլոբալիզացիայի տեմպերի աճը 2. Ռեսուրսների ազգայնացման աճը
3. Ներմուծման քվոտաների աճը 4. Ազատ առևտրի սահմանափակումներ

3. **Միաժամանակ ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի և Մեծ Քսանյակի անդամ է**
1. Մեքսիկա 2. Արգենտինա 3. Կանադա 4. Հնդկաստան

4. **Երկրագնդի ներքին թաղանթներից չէ՝**
1. Կոնրադի մակերևույթը 2. Մոխոյի մակերևույթը
3. Միլանկովիչի մակերևույթը 4. Ասթենոսֆերան

5. **Աղետալի երևույթներից ո՞րն է վերջին տասնամյակներին քանակապես առաջատար**
1. Երկրաշարժ 2. Տոռնադո 3. Ցունամի 4. Ջրհեղեղ

6. **Հասարակածային խոնավ մշտադալար անտառների հատման արդյունքում գյուղատնտեսության ո՞ր ուղղությունն է առավելապես զարգանում՝**
1. Պաստորալիզմը 2. Ղերմամշակությունը
3. Տնկատափային տնտեսությունը 4. Ագրոանտառարդյունաբերությունը

7. **Նշված երկրներից ՀՆԱ աճի տարեկան ամենաբարձր ցուցանիշներն ունի**
1. Վիետնամ 2. Բելառուս 3. Դանիա 4. ԱՄՆ

8. **Նշված երկրներից որու՞մ է վարչաքաղաքական միավորը սահմանել ժամային գոտուց 30 րոպեով տարբերվող ժամանակ**
1. ԱՄՆ 2. Կանադա 3. Բրազիլիա 4. ՌԴ

9. **ԵՄ երկրների վերականգնվող էներգիայի կառուցվածքում նշված աղբյուրներից առաջատար է**
1. Քամու 2. Արևային 3. Ջրային 4. Կենսազազ

10. **Նշվածներից աշխատատար արտադրություն է՝**
1. Գյուղատնտեսական մեքենաշինություն 2. Սարքաշինություն
3. Ծանր մեքենաշինություն 4. Պղնձաձուլություն

11. **Համաշխարհային օվկիանոսում ձկնային պաշարների խոշոր կուտակումներ չեն դիտվում**
1. Մանգրային թփուտներում 2. Ափվելլինգի գոտիներում
3. Մայրցամաքային ծանծաղուտի գոտում 4. Ռիֆտային գոտիներում

12. **Նշված մարզերից որու՞մ են բացակայում բարձրլեռնային (2000մ-ից բարձր) գյուղերը**
1. Վայոց Ձոր 2. Լոռի 3. Շիրակ 4. Կոտայք

13. **1899թ.-ին դեպի Հայաստան կառուցված երկաթուղային գիծը ներկայիս մարզերից որի՞ տարածքով չէր անցնում**
1. Տավուշ 2. Արագածոտն 3. Լոռի 4. Շիրակ

14. **Այցելող զբոսաշրջիկների թվով առաջատար քաղաքն է՝**

1. Դիլիջան 2. Ծաղկաձոր 3. Երևան 4. Ջերմուկ

15. **Գետի հունի նշված հատվածներից որում է հոսքն ավելի շատ էրոզիա կատարում**



1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Բ կետում տեղական ժամանակը 13:20 է, Ա կետում՝ 12:40: Արևելյան երկայնության ո՞ր աստիճանի վրա է Բ կետը, եթե Ա կետը գտնվում է հս. լ. 37; արլ. ե. 68 կոորդինատներով:

17. Վարարումներից խուսափելու նպատակով գետի հունը ուղղվել է և ունի 5000մ երկարություն: Սակայն այժմ դիտարկվում է գետի բնական հունի վերականգնման նախագիծ, որի համաձայն էկոհամակարգային ծառայությունների առավելագույն ներուժը կդիտվի գալարների միջոցով երկարությունը 6000մ հասցնելու պարագայում: Արդյունքում հավելյալ քանի հեկտար հողատարածք դուրս կգա տնտեսական օգտագործումից, եթե գետի երկայնքով ամեն կողմից 10մ լայնությամբ գոտին անձեռնմխելի է:

18. Ճանապարհորդը հարավային բևեռային շրջագծից 0 ազիմուտով 166,5կմ շարժվելուց հետո աշխարհագրական ո՞ր լայնության վրա կհայտնվի:

19. Ա երկրի բնակչության թիվը 6մլն մարդ է, որից 4մլն-ը աշխատանքային ռեսուրս է: Երկրում քանի՞ տոկոս է գործազրկությունը, եթե աշխատանքային ռեսուրսների կազմում 50%-ը տնտեսապես ակտիվ է (աշխատունակ), իսկ զբաղված բնակչությունը 1,5մլն է:

20. 1:20000 մասշտաբի տեղագրական քարտեզում ցանցի յուրաքանչյուր վանդակի մեծությունը 1սմ² է: Քանի վանդակ կզբաղեցնի 80000մ² մակերեսով ֆերման:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Ասատրյան